«ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԱՄԱՆՈՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԴՊՐՈՑ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝ ԼԻԴԱ ՎԱՉԱԳԱՆԻ

ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՆՈՐ ԱՄԱՆՈՍ 2023

Բովանդակություն

Ներածություն .....

1. Դպրոցի առաքելությունը .....

1.1 Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարելու ծրագրի առաքելությունը…..

1.2 Ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ ծրագրի իրականացման համար……

1.3 Առաքելությունն իրատեսական դարձնելու գրավականներն են՝ ……..

2. Դպրոցի մասին ընդհանուր տեղեկություններ .....

2.1.Դպրոցի շենքի կառուցվածքը (ուսումնական ֆիզիկական միջավայր),առկա վիճակը……...

2.2. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան,ուժեղ և թույլ կողմեր .....

3. Դպրոցի նախրդ տարիների գործունեության վերլուծություն

3.1. Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը,ուժեղ և թույլ կողմեր.....

3.2. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը,ուժեղ և թույլ կողմերը .....

3.3. Կառավարման և խորհրդակցական մարմինները,ուժեղ և թույլ կողմերը.....

3.4. Աշակերտական համակազմը,ուժեղ և թույլ կողմերը.....

3.5. Մանկավարժական համակազմը , ուժեղ և թույլ կողմերը.....

3.6. Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ , ուժեղ և թույլ կողմերը.....

3.7. Ուսումնական միջավայրը, ուժեղ և թույլ կողմերը.....

3.8. Հասանելիության ապահովումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար ուժեղ և թույլ կողմերը.....

3.9. Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների, ուժեղ և թույլ կողմերը.....

4-5-7. Դպրոցի գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակներն ու խնդիրները և ծրագրի իրականացման ռիսկերը ……

6.Սահմանված նպատակներին ու խնդիրներին համապատասխան գործողությունները կատարողները և ժամանակացույցը և հնարավոր ֆինանսական ծաղսերը.....

8.Ակնկալվող արդյունքները .....

9. Ծրագրի գնահատման չափանիշներն ու վերահսկողությունը.....

10. Եզրափակում .....

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Նոր Ամանոսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) զարգացման 2023-2028 թվականների զարգացման ծրագիրը մշակման համար հիմք են հանդիսացել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, դպրոցի գործունեության նախորդ ուսումնական տարիների ներքին գնահատման հաշվետվությունները, «Հայաստանի Հանրապետության 2014 -2025 թթ ռազմավարական ծրագիրը» «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագիծը, Նոր Ամանոսի միջնակարգ դպրոցի նախորդ տարիների գործունեությունը, մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները, դպրոցում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև Արագածոտնի մարզի, Նոր Ամանոս համայնքի առանձնահատկությունները:

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը նախասահմանում է 2023-2028 թվականների դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան և հաշվի է առնված կրթական հաստատության ինքնազարգացման ներուժը:

Հիմք ընդունելով դպրոցի ներկա վիճակը՝ սույն զարգացման ծրագիրն ուղղված է դրանց աստիճանական զարգացմանը՝ նախանշելով զարգացման գերակա ուղղություններն ու նախադրյալները:

Ծրագրի հիմնաքարը դպրոցի զարգացման նոր ուղիներ գտնելն է, որոնք պետք է նպաստեն սովորողի ներդաշնակ զարգացմանը, կարողունակ քաղաքացու ձևավորմանը, ով կունենա ազգային արժանապատվության խոր գիտակցություն, ազգային արժեքների արժևորման ու դրանց պահպանման պատասխանատվություն, կունենա իր ներուժին և նախասիրություններին համապատասխան մասնագիտական կողմնորոշում,կկարողանա ինքնադրսևորվել ցանկացած միջավայրում:

1.ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Կրթությունը անձի հասարակության և պետության շահերից ելնող՝ ուսուցման և դաստիարակության գործընթաց է,որը նպատակաուղղված է գիտելիքներ պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու համար, իսկ գյուղական միջավայրում կրթությունը երեխայի այլընտրանքն է,երեխայի ընտրության հնարավորությունը,առաջ գնալու ճանապարհը։Կրթված սերունդը քաղաքացիական առողջ հասարակության հիմքն է,իսկ կրթությունը՝ լավագույն զենքը ցանկացած պայքարում,երկրի համար ՝ լավագույն անվտանգության երաշխիքը։Հետևաբար 21-րդ դարը մերն է լինելու՝ հենց կրթելու,կրթվելու և զարգանալու միջոցով։
Պահանջվում է՝

1. Սովորողներին տալ որակյալ կրթություն և հիմնարար գիտելիքներ։
2. Կրթության մեջ առաջնահերթություն տալ ուսուցման պրակտիկ ուղղվածությանը, գիտելիքներն ու կարողությունները գործնականում կիրառելու հնարավորություն տալ։

3. Երաշխավորել սովորողների ազատությունը՝ որպես կրթության արդյունա-վետության բարձրացման միջոցի։Սովորողին պետք է ընձեռել ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու հնարավորություն։
4. Ուսումնառության ընթացքում զարգացնել ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողություն։

5. Նպաստել սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը։ Այս որակն իր մեջ ներառում է լեզուների, մարդկանց հետ շփման տարբեր եղանակների իմացություն, խմբային աշխատանքի, կոլեկտիվում տարբեր դերեր կատարելու կարողություններ։

6. Ձևավորել սովորողի շարունակական կրթությունն ապահովող անձնային որակներ։
7.Սովորեցնել սիրել սեփական համայնքը, հոգ տանել սեփական միջավայրի մասին, առաջնային տեղում դնել հայրենիքը, համայնքը։
8.Սերմանել հայրենասիրություն,ազգային մտածողություն և ազգային գաղափարախոսություն։
9. Դպրոց՝ յուրանքանչյուր երեխայի համար, որտեղ կարող են սովորել բոլորը՝ այդ թվում ԿԱՊԿՈՒ երեխաները,սոցիալապես անապահով ընտանիքի երեխաները,կյանքի դժվարին պայմաններում հայտնված երեխաները։

Ուստի դպրոցի առաքելությունն է՝ ձևավորել կրթված,մրցունակ,ակտիվ, մասնագիտական ճիշտ կողմնորոշում ունեցող,բազմակողմանիորեն զարգացած,ազգային,համամարդկային արժեքներով ու գաղափարախոսությամբ առաջնորդվող կարողունակ /կոմպետենտ/ քաղաքացիներ։

1.1 Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարելու դպրոցի առաքելությունը

- Ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով ձևավորել
- համակողմանիորեն զարգացած,
- մասնագիտորեն կողմնորոշված,
- ազգային արժեքներ կրող,
- հայրենասեր,
- մարդասիրության ոգով դաստիարակված կոմպետենտ քաղաքացիներ:

1.2 Ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ ծրագրի իրականացման համար

Մարդկային ռեսուրսներ

• Առկա ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում
• Մանկավարժական համակազմի համալրում նոր փորձառու կադրերով

Նյութատեխնիկական բազա

• Համակարգչային տեխնիկայի համալրում • ժամանակակից սարքերի և սարքավորումների ձեռքբերում
• Էլեկտրոնային կրթական ռեսուրսների շարունակական համալրում և դասապրոցեսում վերջիններիս կիրառման ընդլայնում

Ֆինանսական ռեսուրսներ

• արտադպրոցական դաստիարակության կազմակերպում
• լրացուցիչ վճարովի ծառայությունների կազմակերպում
• Պետական բյուջե

1.3 Առաքելությունն իրատեսական դարձնելու գրավականներն են՝

- Փորձառու մանկավարժական համակազմը,

թիմային և համագործակցային աշխատանքը,

- Համընդհանուր ներառական կրթության իրականացումը,
- Կրթության որակի բարելավմանը միտված շարունակական,

միջոցառումները՝ սեմինարներ, վերապատրաստումներ,կամավոր ատեստավորում,

- Կրթության կազմակերպման միջավայրի շարունակական բարելավումը,
- Դպրոցի ակտիվ ներգրավվածությունը սոցիալ-մշակութային միջոցառումներում,
- Արտադասարանական միջոցառումներում սովորողների ներգրավվածությունը (ճանաչողական այցեր, մասնագիտական կողմնորոշման նպատակով հանդիպումներ, բանավեճեր, քննարկումներ և այլն),
- Դպրոցում ձևավորված ավանդույթները,
- Սովորողների մասնակցությունը մրցույթների, օլիմպիադաների
- Նախագծային ուսուցման կիրառում
- Խմբակների ստեղծում

2. ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Կառավարության (այսուհետ՝ Հիմնադիր):

1. «Նոր Ամանոսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը 2003 թ.-ին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում (պետռեգիստրի վկայականի գրանցման համարը 56.210.00828, վկայականի համարը 03Ա057563, ծածկագիր10015356):

2. Ուսումնական հաստատությունը գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ՝ հաստատված 31.10.2017թ., գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից:

3. Դպրոցի գտնվելու վայրն է՝ՀՀ Արագածոտնի մարզ, գյուղ Նոր Ամանոս 2-րդ փողոց,շենք 2:Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք,ձևաթղթեր: Կնիքը, ձևաթղթերը և անհատական այլ միջոցներ ձևավորելիս հայերենին կարող է զուգակցվել անգլերենը և ռուսերենը:

5. Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

ՀՀ Արագածոտնի մարզի «Նոր Ամանոսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

Դպրոցը հիմնվել է 1981թվականին: Շենքը տիպային է: Շենքի նախագծային հզորությունը 740 աշակերտ:

Դպրոցում աշխատում է 20 ուսուցիչ, 1/մեկ/ուսուցչի օգնական, ուսուցիչներից 18-ը ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն,2-ը՝ միջին մասնագիտական: Մանկավարժական խորհուրդը կազմված է 21 անդամից:

Դպրոցի աշակերտների թիվը այս ուսումնական տարում 134 է:

Դպրոցն ունի նաև նախակրթարան, որը հիմնադրվել է 2011թ.-ին,2022-2023 -ուսումնական տարում նախակրթարան է ընդունվել 15 աշակերտ: Նախակրթարանը վերանորոգել է 2010թ.-ին և ապահովված է համապատասխան գույքով և նյութատեխնիկական բազայով:

Դպրոցն ունի կառավարման խորհուրդ, ծնողական խորհուրդ, աշակերտական խորհուրդ:

Խորհրդակցական մարմիններն ունեն կանոնադրություն, աշխատանքային պլաններ, գործում են օրենքով նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում:

Դպրոցը գործում է մեկ հերթով և հինգօրյա աշխատանքային ռեժիմով:

2.1 Դպրոցի շենքի կառուցվածքը (ուսումնական ֆիզիկական միջավայր), առկա վիճակը

Նոր Ամանոսի միջնակարգ դպրոցի շենքը գտնվում է ծայրաստիճան վատ վիճակում: Դպրոցական շենքը տիպային կառույց է, որը կառուցվել և շահագործման է հանձնվել 1981թվականին,նախագծային հզորությունը 740 աշակերտի համար է:Դպրոցում այս տարիների ընթացքում շինարարական ամրապնդման և հիմնանորոգման աշխատանքներ չեն կատարվել,և որոշ մասնաշենքեր դարձել են վթարային՝ ընդհանրապես չեն օգտագործվում: Մասնաշենքերից 4-ը երկհարկ են, իսկ մեկը՝ քառահարկ:Վթարայնության աստիճանով՝ 1-ին մասնաշենք՝ IV կարգի վթարային,2-րդ մասնաշենք՝ բավարար,3-րդ մասնաշենք՝ բավարար,4-րդ մասնաշենքը՝ IV կարգի վթարային,5-րդ մասնաշենք՝ II կարգի վթարային::

Դպրոցում այս պահին գործում է 12 դասասենյակ, 1 նախակրթարան, 4 վարչական սենյակներ, 1 սպորտդահլիճ, , հարմարեցված համակարգչային դասարան 1, գրադարան 1,

ՆԶՊ դասասենյակ 1, զենքի պահեստ 1, ճաշարան 1, սանհանգույց 2:Դպրոցը չունի լաբորատորիաներ,արհեստանոցներ,սանհանգույցներ,հանդիսությունների դահլիճ,մարզահրապարակ,շախմատի սենյակ,ցանկապատ:
Անվտանգությունից ելնելով `փակվել են 1-ին և 4-րդ վթարային մասնաշենքերի մուտքերն ու ելքերը,միայն 1-ին մասնաշենքի մուտքը դպրոցի գլխավոր մուտքն է և մեկ հատվածը օգտագործվում է,2-րդ և 3-րդ մասնաշենքերը կիսավթարային վիճակում են և դասապրոցեսը կազմակերպվում է հենց այդ մասնաշենքերում,պատուհանները լավ վիճակում չեն ,որի պատճառով ջեռուցման ժամանակաշրջանում խնդիր է առաջանում `ջերմությունը չի պահպանվում, նույնիսկ ցելաֆոնապատված դասարաններում,իսկ միջացնքները չեն ջեռուցվում:Դպրոցի հատակը բետոնապատ է,պատուհանները՝ խորհրդային ժամանակշրջանի:5-րդ մասնաշենքը օգտագործվում է, որպես սպորտդահլիճ,որը նույնպես ունի հիմնանորոգման կարիք,պատուհանները կիսաավերված վիճակում են: 2-րդ,3-րդ,5-րդ մասնաշենքերի տանիքը վերակառուցվել է 2000թվականին ‹‹Կաթոլիկ օգնության ծառայության››բարեգործական նվիրատվության շնորհիվ,իսկ աշխատանքները կատարել են ուսուցիչներն ու ծնողները,նույն ծրագրի շրջանակում սպորտդահլիճի պատերն են ներկվել,հատակ՝ մասնակի վերանորոգվել և ներկվել,2011թվականից դպրոցում ‹‹Ասիական զարգացման բանկը›› կառուցել է նախակրթարան,2016թվականին դպրոցը խմելու ջրի ջրագիծ է անցկացրել,2017թվականին հոլանդահայ բարերարի միջոցով դպրոցում կառուցվել է մեկ սանհանգույց ,2018թվականին ՄԱԿ-ի ‹‹Դպրոցական Տաք սնունդ ›› ծրագրի շրջանում կառուցվել է ճաշարան,2020 թվականին փոխվել են դպրոցի դասասենյակների դռները և մեկ մուտքի դուռ: 2017թվականին դպրոցը ընդգրկվել է հիմնանորգվող դպրոցների ցանկում և կատարվել է դպրոցի նախագծային աշխատանքները , 2018թվականին դպրոցի հիմնանորոգման նախագիծը հանձնվել է Պետական գույքի կառավարման կոմիտե, 2019թվականին դպրոցը հանվել է դպրոցների հիմնանորոգման ծրագրից;
2019թ.ին ամբողջովին վերափոխվել է ջեռուցման համակարգը՝ հեղուկ վառելիքով ջեռուցման տարբերակից անցել է էլեկտրաէներգիայով ջեռուցման՝վերականգնելով եռաֆազ հոսանքը :
Համընդհանուր ջեռուցում չի իրականացվում,ջեռուցվում են միայն դասասենյակները,վարչական սենյակները:

2.2 Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

Դպրոցի շենքի շահագործումը չի համապատասխանում անվտանգ շահագործման նորմատիվներին, պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը:Բոլոր դասասենյակները բավարար չափով կահավորված են: Դպրոցն բավարար չափով ապահովված է անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով:

ՈՒժեղ կողմ	Թույլ կողմ
• բացօթյա սպորտհրապարակ, • դասարաններ,համապատասխան գույք • ապաստարան • Դպրոցամերձ հողատարածքը • Հարմարեցված ճաշարան • Համակարգչային դասասենյակ	• շենքերի վթարայնությունը • չցանկապատված լինելը • սանհանգույցի պակասը • Շենքը հարմարեցված չէ ԿԱՊԿՈՒ սովորողների անվտանգ տեղաշարժի և ուսուցում ապահովող պայմաններին, չկան թեքահարթակներ։ • Լաբորատորիաների բացակայություն • Գույքով ապահովվածություն • Դպրոցամերձ այգի • Պահուստային դռների և աստիճանավանդակի վերանորոգում • Հաստատությունն ապահովված չէ կապի և արտակարգ իրավիճակներիազդարարման համակարգով: • Կապի ազդարարման միջոցներ

3. ԴՊՐՈՑԻ ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իրավիճակի վերլուծությունը շատ կարևոր է դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար: Վերլուծության համար հիմք են հանդիսացել նախորդ զարգացման ծրագրի տարիների ընթացքը և դպրոցի գործունեության ներքին գնահատման վերջին ուսումնական տարիների հաշվետվությունների արդյունքները:

Նախորդ տարիների ընթացքում կատարված աշխատանքները

Ոլորտը	Իրականացված աշխատանքը
Դպրոցի շենքային պայմաններ	Դիզելային վառելիքով ջեռուցումից անցում է կատարվել էլեկտրաէներգիայով ջեռուցման, ամբողջովին փոխվել են դասասենյակների դռները և մեկ մուտքի դուռ, դպրոցի տարածքի մի մասում կատարվել է ծառատունկ
	,,Տաք սնունդ,, ծրագրի շրջանակում դպրոցում հիմնվել է հարմարեցված<u>ճաշարան:</u> Դպրոցի շենքերի շահագործումը չի համապատասխանում անվտանգ շահագործման նորմատիվներին, պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը: Բոլոր դասասենյակները ունեն վարչական գույք՝ բավարար վիճակում գտնվող, բայց օգտագործված գույքով

Նյութատեխնիկական բազա	Դպրոցն ունի 7 համակարգիչ, 11 նեթբուքներ, 3 բազմաֆունկցիոնալ տպիչ սարք, ,2 պրոյեկտոր
Մանկավարժական համակազմի ձեռքբերումներ	Ուսուցիչներից միայն երկուսը չունեն բարձրագույն կրթություն: Բոլոր ուսուցիչներն ունեն համապատասխան որակավորում: Ուսուցիչների մեծ մասն անցել են համապատասխան վերապատրաստումներ և ատեստավորված են, մյուսները վերապատրաստվում և ատեստավորվում են ժամանակացույցին համապատասխան, մեկ ուսուցիչ ունի առաջին կարգի տարրակարգ,մեկ դասվար արժանացել է 2021թ.-ին<<Տարվա լավագույն>> մրցանակի,երկու ուսուցիչ ներգրավված են Տեսչական մարմնի կողմից իրականացվող դասալսումներին,մեկ ուսուցիչ ներգրավված է դասագրքերի գնահատման առարկայական հանձնաժողովում
Աջակցություն մանկավարժներին	ՏՀՏ կարողությունների և հմտությունների զարգացում Էլեկտրոնային կրթական ռեսուրսների օգտագործում՝ e-school.am, armedu.am, lib.armedu.am,imdproc.am kznakhimnadram.blogspot.com, Հեռավար դասավանդման հմտությունների զարգացում
Խորհրդակցական մարմիններ	Ձևավորված են և ակտիվորեն գործում են աշակերտական խորհուրդն ու ծնողական խորհուրդը, որոնք սերտորեն համագործակցում են տնօրենության և մանկավարժական համակազմի հետ: ԱԽ-ն հանդես է գալիս նախաձեռնություններով, անցկացնում ինքնուրույն միջոցառումներ:
Դպրոցի մշակութային և ուսումնադաստիարակչական գործունեություն	Դպրոցը համագործակցել և համագործակցում է այլ ուսումնական հաստատությունների հետ, ակտիվորեն մասնակցում է համայնքի կողմից կազմակերպված միջոցառումներին կազմակերպում է ավանդական միջոցառումներ, տոներ և թեմատիկ միջոցառումներ

	կազմակերպում է մշակութային և ուսուցողական բնույթի արտադասարանական, արտադպրոցական միջոցառումներ՝ գրական-երաժշտական ցերեկույթներ , հիշատակի և խոնարհման միջոցառումներեր
Մասնակցություն մարզային և հանրապետական մրցույթների ու մրցաշարերի	Աշակերտները ակտիվ մասնակցում են «Կենգուրու», «Մեղու» մրցույթներին, առարկայական օլիմպիադաներին,սպորտային մրցաշարերի՝2018թ-ի տղաների/ մինչև 14 տարեկաներ/թիմը վոլեյբոլի պատանեկան առաջնությունում գրավել է 2-րդ տեղը, 2018թ-ի աղջիկների/15 տարեկաներ/ թիմը վոլեյբոլի պատանեկան առաջնությունում գրավել է 2-րդ տեղը,աղջիկների թիմը 2019թ.-ին Համահայկական խաղերի լողափնյա վոլեյբոլի արծաթե մեդալակիր է, 2018թ.-ին Ֆելիքս Դալլաքյանի անվան հուշամրցաշարին աղջիկների վոլեյբոլի թիմը գրավել է 1-ին պատվավոր տեղը,2020թ.-ին աղջիկների /մինչև 18 տարեկան/թիմը լողափնյա վոլեյբոլի մրցաշարում գրավել է 3-*րդ տեղը, 2020թ.-ին աշակերտներից երկու աղջիկ մասնակցել են ՀՀ հավաքականի կազմում վոլեյբոլի միջազգային մրցաշարին,տղաների վոլեյբոլի թիմը <<Սպարտակիադայի>> մարզի առաջին տեղի հաղթող է,2022թ.-ին տղաների թիմը ԽՄՕՄ-ի հանրապետական մրցումներում զբաղեցրել է 4-րդ տեղը,2022-թ.ին աշակերտները մասնակցել են Աստվածաշնչյան գիտելիքների վիկտորինային և զբաղեցրել մարզում 3-րդ տեղը:

3.1 Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ: Նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայքում և մարզպետարանի կայքէջում: Բյուջեի ծախսերի հիմնական ուղղություններն են.

- աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ,
- կոմունալ վճարներ,
- գրասենյակային և տնտեսական ապրանքներ,
- գույքի և սարքավորումների ձեռքբերման
- ծախսեր,
- հատուկ նպատակային ծախսեր,
- տեղեկատվական ծառայություն
- կենցաղային և հանրային սնունդ

2018-2022թվականների ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ տարեկան բյուջեի միջոցները հիմնականում բավարարում են աշխատավարձին և կոմունալ ծախսերին, 2022 -2023ուստարում ավելացել է սովորողների թիվը,ինչով պայմանավորված կավելանան նաև ֆինանսական միջոցները:2019-2023թվականներին մանկավարժական աշխատողների դրուքաչափի աստիճանական բարձրացում է տեղի ունեցել:

2019 թվականի հունվարից դպրոցի մանկավարժական աշխատողների դրուքաչափի փոփոխություն է կատարվել՝ 3-րդ տարրակարգ -89000 դրամի փոխարեն՝ 108800 դրամ, 2-րդ տարրակարգ - 93000դրամի փոխարեն՝ 109 300 դրամ ,1-ին տարրակարգ- 99000 դրամի փոխարեն՝ 110300 դրամ:

2021թ.-ի հունվարից մանկավարժական աշխատողների դրուքաչափի փոփոխություն է կատարվել՝2-րդ տարրակարգ - 109 300 դրամի փոխարեն՝112300դրամ,1-ին տարրակարգ- 110300 դրամի փոխարեն՝ 113300 դրամ:

2021թ.-ի սեպտեմբերին մանկավարժական աշխատողների դրուքաչափի փոփոխություն է կատարվել՝ 3-րդ տարրակարգ -108800 դրամի փոխարեն՝ 112000 դրամ , 2-րդ տարրակարգ - 112300դրամի փոխարեն՝ 115000 դրամ ,1-ին տարրակարգ- 113300 դրամի փոխարեն՝ 118000դրամ:

2023թվականի հունվարից ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատավարձը 87975 դրամի փոխարեն դարձել է 95625 դրամ:

Դպրոցի առկա և ձեռք բերված գույքը հաշվառված է, կատարված է գույքագրում և ամեն տարի կատարվում է գույքագրումը: Դպրոցի տվյալ ուստարվա բյուջեի նախագիծը, ըստ դպրոցի կանոնադրության պահանջի, ներկայացվում է կառավարման,մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդներին՝ առաջարկություններ ստանալու նպատակով, ապա ներկայացվում լիազոր մարմնի հաստատման:

ՈՒԺԵՂ կողմ	ԹՈՒՅԼ կողմ
• Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումները • Դպրոցի բյուջեի արդյունավետ և նպատակային օգտագործումը • Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումը՝ ըստ օրենսդրական պահանջների • Աշխատավարձի և կոմունալ ծախսերի ժամանակին վճարումը	• Պետական բյուջեից դպրոցի զարգացմանն ուղղված ծրագրերի կազմման ֆինանսավորման անբավարար ծավալը • Աշակերտների քիչ թվի հետևանքները • Արտաբյուջետային միջոցների բացակայությունը • Լրացուցիչ կրթական ծառայությունների ներդրման բացակայությունը • Ծնողների, համայնքի, բարերարների կողմից ներդրվող միջոցների բացակայությունը

3.2 Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով՝ «Կրթության մասին» «Հանրակրթության մասին» «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, «ՀՀ աշխատանքային օրենսգրքով» դպրոցի կանոնադրությամբ, օրինակելի իրավական ակտերի տեղայնացված տարբերակներով, ներքին իրավական ակտերով, նորմատիվ փաստաթղթերով: Դպրոցին վերաբերող բոլոր նորմատիվային փաստաթղթերի վարումը իրականացվում է սահմանված կարգով: Անհրաժեշտության դեպքում մշակվում և գործածության մեջ են դրվում ներքին գործածության համար նախատեսված իրավական նոր ակտեր (օրինակ՝ ներքին կարգապահական կանոններ և այլն):

Դպրոցավարությունն իրականացվում է սահմանված կարգով:

Դպրոցի գործունեության փաստաթղթերի թղթային ձևաչափից աստիճանաբար անցում է կատարվում էլեկտրոնայինի:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
• Պարտադիր գործածության բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ և էլեկտրոնային, լրացվում են սահմանված կարգերի համաձայն • ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերը համապատասխանեցված են դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին և վարվում են կանոնադրության պահանջներին համապատասխան • Լիցենզիաների առկայություն կրթական երեք աստիճանում	• Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ուսուցիչների պասիվ մասնակցություն • Նախակրթարանի լիցենզավորում ՆԴՎ պլանի կազմում

3.3 Կառավարման և խորհրդակցական մարմինները

Դպրոցը սերտորեն համագործակցում է և՛ կառավարման, և՛ խորհրդակցական մարմինների հետ. դպրոցի գործունեությունը բաց է և թափանցիկ:Կառավարման խորհուրդը գործում և մշտապես գործել է դպրոցի կանոնադրության և լիազոր մարմնի կողմից սահմանված կարգերով իրեն վերապահված գործառույթ-ներին համապատասխան: Նրա գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը, Խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում, պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին:Մանկավարժական խորհուրդը պատշաճորեն կատարում է կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները, հիմնականում գումարվում է բոլոր անդամների մասնակցությամբ, քննարկում է նաև զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրները, անդրադառնում ընթացիկ հարցերին և կոլեկտիվ պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար:Աշակերտական խորհուրդն ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունք-ներով: Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը:Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացվում են հանդիպումներ սովորողների հետ, լսում նրանց, լուծում տալիս խնդիրներին: Անչափ կարևորում ենք, աշակերտների կողմից բարձրացված հարցերի խոր և մասնագիտական վերլուծությունը, աշակերտական խորհրդի նախաձեռնողա-կանության խթանումը:

Աշակերտական խորհրդի նախագահը, ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

Ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ և ներգրավված է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Ծնողական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով, ըստ անհրաժեշտության, մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում ծնողական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

Ծնողական խորհուրդը դասարանական ծնողխորհուրդների միջոցով կազմակերպում է բազում ճանաչողական էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ և այլ միջոցառումներ:

ՈՒԺԵՂ կողմ	ԹՈՒՅԼ կողմ
• Ծնողական խորհրդի աջակցությունը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներին • ԾԽ-ի կողմից ծնողների հետ տարվող աշխատանքը՝ սովորողների հաճախումների, ուշացումների և վարքագծային շտկումների ուղղությամբ, պասիվ ծնողներին ներգրավելու դպրոցական աշխատանքներում • Հաստատության գործունեության թափանցիկություն • Կառավարման խորհրդի, խորհրդակցական մարմինների դպրոցամետ գործունեություն՝ իրենց վերապահված գործառույթների շրջանակում • Ժողովրդական սկզբունքներին համապատասխան աշակերտական ինքնավարության գործունեություն	• Համագործակցության,նախաձեռնություններ ի պասիվություն • Ծնողների կողմից դասալսումներ չիրականացնել • Ծնողական պասիվ մասնակցություն շաբաթօրյակների,ծառատունկների • <<Դասը վարում է ծնողը>> մասնագիտական փորձի փոխանակման պակաս • ԾԽ և ԱԽ ակտիվ ներգրավվածություն արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում • Համադպրոցական էքսկուրսիաների կազմակերպում • ԾԽ պասիվ մասնակցությունը ԿԱՊԿՈՒ աշակերտների ինտեգրման գործընթացին Շրջանավարտների և հոգեբարձուների խորհուրդների բացակայություն

3.4 Աշակերտական համակազմը

2022-2023 ուստարում դպրոցում սովորում է 134 աշակերտ: Նախորդ տարիներին շարունակաբար աճել է աշակերտների թիվը, այս ուստարում, ինչպես մյուս ուստարիներին, դպրոցում ընդունվել է 19 աշակերտ:

Դասարանների թիվը	2018-2019ուստարի	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
1 -ին դասարան	7	9	15	18	աճ
2-րդ դասարան	15	9	9	14	նվազում
3 -ին դասարան	13	15	9	8	նվազում
4-րդ դասարան	11	14	15	9	նվազում
5 -ին դասարան	11	11	13	15	աճ
6-րդ դասարան	4	11	11	13	աճ
7 -ին դասարան	4	4	11	10	աճ
8-րդ դասարան	9	4	4	11	աճ
9-րդ դասարան	10	9	4	4	նվազում
10-րդ դասարան	8	8	9	3	Նվազում
11-րդ դասարան	7	8	8	9	Աճ
12-րդ դասարան	6	7	8	5	նվազում
Ընդամենը	105	109	116	119	աճ

Ամուր է դպրոց-շրջանավարտ կապը, ինչը փաստում է, որ մեր սաները սիրում են դպրոցն ու կրթությունը: Դպրոցը հատուկ ուշադրություն է դարձնում աշակերտների հաջողություններին դպրոցում և դպրոցից դուրս: Կարևորում է նրանց ձևավորումը՝ որպես անհատականություններ, որպես քաղաքացիներ, ցուցաբերվում է անհատական մոտեցում:Դպրոցը պարբերաբար տարբեր ձևաչափերով խրախուսում է շնորհալի, դպրոցասեր և ակտիվ աշակերտներին, աջակցում նրանց նախասիրությունների իրականացմանը:

ՈՒԺԵՂ կողմ	Թույլ կողմ
• Սովորողների թվի աճը • գիտելիքների ստուգում ,ավարտական քննությունների վերլուծություն • Ակտիվ մասնակցությունը ստեղծագործական և սպորտայինմրցույթներին • Ակտիվ մասնակցությունը «Կենգուրու» և «Մեղու» հանրապետական մրցույթներին առարկայական օլիմպիադաներին • Անհարգելի բացակայությունների ցածր ցուցանիշը • Ակտիվ մասնակցությունը արտադասարանական միջոցառումներին • Բուհեր ընդունվելու բարձր • Ցուցանիշը	• Թույլ կարողությունների տեր աշակերտներ • Տղաների շրջանում կրթության նկատմամբ հետաքրքրվածության պակաս • Ռազմական հաստատություններ դիմորդների պակաս • Մրցակցային մտածելակերպը

3.5 Մանկավարժական համակազմը

Մանկավարժական համակազմը համալրված է փորձառու և որակյալ կադրերով: Ուսուցիչները համավարակի պայմաններում բարելավեցին իրենց կարողությունները տեղեկատվական տեխնոլոգիաների դաշտում և կարողացան պատշաճորեն իրականացնել հեռավար ուսուցում: Այսօր էլ, ըստ անհրաժեշտության, հմտորեն օգտվում են առկա էլեկտրոնային կրթական ռեսուրսներից, նաև իրենք են ստեղծում ռեսուրսներ;

Դպրոցի ուսուցչական համակազմը համալրվում է ուսուցչի թափուր տեղի համար հայտարարվող մրցույթով՝ ըստ լիազոր մարմնի կողմից սահմանված կարգի:

Կադրային քաղաքականությունը կրել և կրելու է շարունակական բնույթ, մանկավարժական համակազմը համալրվելու է նոր բարձրորակ կադրերով,ինչպես նաև խրախուսվում են կրթության և մանկավարժության բնագավառներում հաջողություններ ձեռք բերած ուսուցիչները:Մշտական բնույթ են կրում փոխադարձ դասալսումները,բաց դասերը,դաս-միջոցառումները:

Դպրոցում գործում են տարրական, հումանիտար և բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորումները՝ ըստ իրենց գործառույթների:

Ուսուցիչների թիվը	2018-2019ուստարի	2019-2021ուստարի	2020-2021ուստարի	2021-2022ուստարի	2022-2023 ուստարի
	20	21	20	20	21
Մինչև 30 տարեկան	7	7	6	2	2
31-ից 40 տարեկան	5	4	4	8	7
41ից -50 տարեկան	2	2	2	1	1
51-ից -55 տարեկան	1	2	2	2	2
56 տարեկան և ավելի	5	6	6	7	9

,

ՈՒԺԵՂ կողմ	Թույլ կողմ
• անհրաժեշտ որակավորում, աշխատանքային փորձ ունեցող և իրենց աշխատանքին նվիրված մանկավարժ-մասնագետները • աշակերտակենտրոն մոտեցումները սովորողի հաջողության կարևորումը և գնահատումը • Մեթոդական միավորումների համակարգված աշխատանք • անհրաժեշտ որակավորում, • աշխատանքային փորձ ունեցող և իրենց աշխատանքին նվիրված մանկավարժ-մասնագետները • աշակերտակենտրոն մոտեցումները սովորողի հաջողության կարևորումը և գնահատումը • Մեթոդական միավորումների համակարգված աշխատանքը • թափուր տեղերի առկայություն • երիտասարդ կադրերի պակասը • մեծահասակ մանկավարժների կողմից ՏՀՏ գործքիներին ոչ լիարժեք տիրապետելը • Տարրակարգ ունեցողների ցածր տոկոս • Կամավոր ատեստավորված ուսուցիչների բացակայություն • Փորձի փոխանակման պակաս,վարպետության դասեր	• թափուր տեղերի առկայություն • երիտասարդ կադրերի պակասը • մեծահասակ մանկավարժների կողմից ՏՀՏ գործքիներին ոչ լիարժեք տիրապետելը • Տարրակարգ ունեցողների ցածր տոկոս • Կամավոր ատեստավորված ուսուցիչների բացակայություն • Փորձի փոխանակման պակաս • վարպետության դասեր • Դասղեկի ինստիտուտ

3.6 Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

Նոր Ամանոսի միջնակարգ դպրոցը բաց է յուրաքանչյուր համագործակցության համար: Համագործակցության, փորձի փոխանակման, քննարկումների, լավը տեսնելու ու տեղայնացնելու արդյունքում է, նաև ձևավորվում արդյունավետ աշխատանքն ու վերջնարդյունքը:
Դպրոցը համագործակցում է Արագածոտնի մարզպետարանի, ԿԳՄՄՆ, ԳԹԿ-ի ԿՏԱԿ-ի, Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի, Աշտարակի մարզային գրադարանի,ԱԻՆ-ի,ոստիկանության,ամբուլատորիայի, համայնքապետարանի և այլ շահառու կազմակերպությունների ու կառույցների հետ:

ՈՒԺԵՂ կողմ	ԹՈՒՅԼ կողմ
• Մասնակցություն համայնքային ծրագրերին • Մասնակցություն մշակութային կյանքին • ՔՊ,ԱՌՆ Տարհանման պլանների առկայությունը • ԱԻՆ-ի հետ համատեղ սեմինարները • Ոստիկանի կողմից պարբերաբար այցերը և կազմակերպվող դասերը	• Փոխադարձ ներդրումներ • Համայնքի հնարավորություններ ի օգտագործում սովորողների մասնագիտական կողմնորոշման հարցում • ՔՊ,ԱՌՆ Տարհանման պլանների կիրառությունը,համայնքի մասնակցությունը դրանց վարժանքների ժամանակ

3.7 Ուսումնական միջավայրը

Ուսումնական միջավայրը հատուկ կազմակերպված հնարավորությունների, գործընթացների և սոցիալական փոխազդեցության համակարգ է, որը տրամադրում է սովորողին ուսուցման և անձնային-մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսներ, սովորողին կրթում և դաստիարակչական ազդեցություն է գործում նրա վրա: Կրթական արդի միջավայրը միավորում է կրթության համակարգի բոլոր տարրերը և թույլ տալիս զուգորդել ուսուցման գործընթացի տարբեր մեխանիզմներ և գործիքներ: Այսպիսով՝ շատ կարևոր է ունենալ հարմարավետ, հրապուրիչ, խրախուսող ուսումնական միջավայր: Ուստի, դպրոցի 2023- 2028 թվականների զարգացման ծրագրում պլանավորված են քայլեր, որոնք միտված են ամբողջացնելու նկարագրված ուսումնական միջավայրը:

Ներքին գնահատման համար կատարված հարցումներն ապացուցում են, որ դպրոցում ստեղծված է առողջ միջավայր՝ սովորողների ուսումնառության համար:

Երեխաները, ինչպես և նրանց ծնողները, համոզված են, որ դպրոցում իրենք լավ պաշտպանված են, դպրոցում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ:
Մշտական հոգածության առարկա է սովորողների առողջության պահպանումը: Խստորեն վերահսկվում են բացակայությունները: Անհրաժեշտության դեպքում դասարանն օպերատիվ կերպով անցնում է հեռավար ուսուցման՝ ըստ կարգի:Պահպանվում են դպրոցի սանիտարահիգենիկ կանոնները և միջոցառումները:

ՈՒԺԵՂ կողմ	Թույլ կողմ
• Բարոյահոգեբանական մթնոլորտ • Կառավարման կազմակերպական կառուցվածքը • Ժողովրդավարական կառավարումը • Ստեղծարար մշակութային մթնոլորտ • Ներքին կարգապահական կանոնների և վարքականոնների կիրառում վերահսկողություն • ՆԶՊ-կաբինետ • Սպորտային ավանդույթները և ձեռքբերումները • Ուսուցիչների սպորտային պատրաստվածությունը	• Նյութատեխնիկական բազայի հարստացում • Կրթական կարիքները բավարարող պայմաններ • Լաբորատորիաներ • Արհեստանոցներ • Առարկայական դասասենյակներ • Ոչ բավարար հագեցվածությամբ ՆԶՊ-ի կաբինետ • Սպորտդահլիճի անբարվոք վիճակը • Մարզագույք չունենալը • Ուսուցչական կազմի սպորտային միջոցառումները

3.8 Հասանելիության ապահովումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար

Ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով, կրթական գործընթացի առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4 -րդ հոդվածի 2.1 մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է, որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք:Յուրաքանչյուր, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացման գործընթացն այժմ հիմնավորվում է կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովման սկզբունքների վրա:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորող իրավունք ունի օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և բոլոր այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատությունից:

Ելնելով վերոնշյալ դրույթից, ինչպես նաև յուրաքանչյուր երեխայի կարողությունների լիարժեք բացահայտման միջոցով որակյալ կրթական ծառայությունների մատուցման գործընթացների անհրաժեշտությունից՝ պետք է ձեռնարկել հետևյալ միջոցառումները՝

- Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ապահովում
- հավասար հնարավորությունների ստեղծում յուրաքանչյուր երեխայի համար
- կրթական ծրագրերի, ուսումնական նյութերի համապատասխանեցում ԿԱՊԿՈՒ աշակերտների կարիքներին
- երեխայի կրթական ծրագրերի մատչելիության ապահովում
- ուսուցիչների վերապատրաստման ապահովում

ՈՒժեղ կողմ	Թույլ կողմ
• Մանկավարժական կազմի վերապատրաստումները մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից • Հաշմանդամ երեխայի առկայություն,ով չունի մտավոր զարգացվածության խնդիր • Աշակերտների և անձնակազմի բարեհամբյուր վերաբերմունքը • Հոգատարությունը • Ուսուցչի օգնականի առկայությունը • Մարդասիրական վերաբերմունքը	• Հենաշարծողական խնդիրներ ունեցող հաշմանդամ երեխա • Շենքային պայմանները • Խելամիտ հարմարեցումների բացակայությունը • Թեքահարթակներ • ԿԱՊԿՈՒ աշակերտի վկայագրում • Բուժկետի և բուժքույրի բացակայությունը

3.9 Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

Կրթության որակը սովորողի կրթական գործունեության և պատրաստվածության համալիր բնութագիրն է, որն արտահայտում է դրանց համապատասխանությունը պետական և առարկայական չափորոշիչներին և անհատի կրթական կարիքներին:
Դպրոցը լուրջ աշխատանք է տանում ուսման որակը և աշակերտների կարողունակությունները, գիտելիքների անհրաժեշտ ծավալը ապահովելու, արժեհամակարգը ձևավորելու համար: Այդ են վկայում առարկաների մեծ մասի տարեկան,միջին և քննական գնահատականները, առարկայական բուհեր ընդունվող սովորողների թիվը:

Ցուցանիշը	2018-2019 ուստարի	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	Փոփոխություն ների դինամիկան (աճ կամ նվազում)
Բուհ ընդունված աշակերտների ընդհանուր թիվը	3	1	3	2	աճ

Կրթության որակի ապահովման համար տարվում են հետևյալ աշխատանքները.

- Կազմված են թեմատիկ պլաններ՝ պետական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան,
- Մեթոդմիավորումները, ուսումնական գծով տեղակալը վերահսկում են այդ պլանների կատարումը, դասավանդման որակը, տնային հանձնարարությունների ծավալը, թեմատիկ գրավորների տրման ժամկետներն ու բովանդակությունը,
- Պարբերաբար կատարվում են մշտադիտարկումներ, առարկաների դասավանդ-ման դրվածքի ուսումնասիրություններ,
- Տրվում են հայտորոշիչ գրավոր աշխատանքներ, տնօրենության կողմից աշխատանքներ՝ ստուգելու մնացորդային գիտելիքը,
- Աշակերտների առաջադիմության մասին զեկուցվում է դասղեկների կողմից մեթոդմիավորումների, մանկավարժական խորհրդի նիստերում, քննարկվում են առաջադիմությունը, որակը, հոգեբանական և ուսուցման բովանդակության փոփոխություններին աշակերտների հարմարեցման անհրաժեշտությունն ու ձևերը:
- Ըստ անհրաժեշտության՝ անցկացվում են դասարանական խորհրդակցու-թյուններ, քննարկվում ծագած խնդիրները, գտնում լուծման ուղիներ:
- Ապահովվում է ուսուցիչների շարունակական մասնագիտական աճը:
- Դասապրոցեսում ներդրվում են նորագույն տեխնոլոգիաներ, էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, արդյունավետ մեթոդներ:

ՈՒժեղ կողմ	Թույլ կողմ
• Մնացորդային գիտելիքների ստուգումը.հայտորոշիչ գրավոր աշխատանքներ • ԳԻտելիքների ստուգման,ավարտական,պետական ավարտական,միասնական քննությունների արդյունքներ • Բուհ ընդունվողների մասին վիճակագրությունը	• սովորելու մոտիվացիա • Օլիմպիական մասնակցությունը • մասնագիտական կողմնորոշում • լրացուցիչ կրթություն • խմբակներ • նախագծային ուսուցում

4-5-7.Դպրոցի գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակներն ու խնդիրները և ծրագրի իրականացման ռիսկերը

ՈԼՈՐՏԸ	ՆՊԱՏԱԿԸ	ԽՆԴԻՐՆԵՐԸ	ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Հաստատության շենքային պայմաններն ու նյութատեխնիկական բազան	Հետևողական աշխատանք կատարել դպրոցի վթարայնության մասին բարձրաձայնման և հիմնանորոգման հարցի ուղղությամբ մասնակի շինարարական աշխատանքներ ի կազմակերպում՝թեքահարթակների կառուցում,հարմարեցումներ Ունենալ անվտանգ և վերանորոգված պահեստային ելքեր Ստեղծել հաստատությունում կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգ	Պետական ծրագրով դպրոցի շենքի կապիտալ վերանորոգում: Դպրոցի կողմից շենքային պայմանների բարելավվմանն ուղղված կապիտալ ծախսեր: Վերանորոգել պահուստային ելքերը,աստիճանավանդակի ամրեցում կատարել Համակարգի ձեռք բերում և տեղադրում	Ֆինանսական ոչ բավարար միջոցներ

	գույքով ապահովվածություն Դպրոցամերձ տարածքի բարեկարգում,ցանկապատում,այգու հիմնում ապաստարանի բարեկարգում	Նոր գույքի ձեռքբերում Ձեռք բերել ցանկապատ,կատարել ծառատունկ Դպրոցի նկուղի մաքրում,բարեկարգում	
Դպրոցի ֆինանսատնտեսակ ան գործունեությունը	Խնայողություններ Համայնքի և ծնողական ներդրումներ 5-12-րդ դասարաններում սննդի կազմակերպում	Ֆինասական մնացորդների ուղղումը առավել նպատակային և կարևոր ծախսերի իրականացմանը: Ձեռնարկվող աշխատանքներում ներառել ծնողներին Նոր տարածքի ստեղծում,ծնողների կողմից շահագրգռվածություն	Անբավարար ֆինանսական միջոցները ծնողների և համայնքի տրամադրվածությունը Ծնողական ներդրման պակասը
Հաստատության գործունեությունը կարգավորող իրավական ակտերը,դրանց վարումը (դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր)	Ներդպրոցական վերահսկողության աշխատանքների կանոնակարգում,պլանի կազմում,վերահսկում Նախակրթարանի լիցենզավորում	Կանոնակարգել կատարվող վերահսկողությունը նպլանավորել աշխատանքները ներդպրոցական վերահսկողության Համապատասխանել լիցենզավորման առկա նորմատիվներին	ՆԴՎ պլանի կազման վերաբերյալ պակաս տեղեկացված լինելը Ճենքի,գույքի համապատասխանությունը նորմերին

Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները	Ծնողներին ներգրավել ուսումնական գործընթացում,պարբերաբար կազմակերպել բաց դռների օրեր ԾԽ-ին ընդգրկել ԿԱՊԿՈՒ աշակերտների ինտեգրման գործընթացին	Ծնողների նախաձեռնողականությունը ԾԽ կանոնադրության պարտականությունների կատարում	Ծնողների համապատասխան ձգտումներըև հետաքրքրվածությունը ԾԽ –ի անգործությունը
Աշակերտական համակազմը	Տղաների կողմից կրթությունը շարունակելու ուղղությամբ աշխատանք	Կազմակերպելմ ասնագիտական կողմնորոշման վերաբերյալ իրազեկման սեմինարներ	Աշակերտների տրամադրվածություն
Մանկավարժական համակազմը	Փորձի փոխանակման կազմակերպում ,Վարպետության դասեր Օտար լեզուների դրվածքի բարձրացում Դասղեկի ինստիտուտի փոխարինում սոցիալական մանկավարժի ծառայությամբ	Փորձ ունեցող առաջատար ուսուցիչների կողմից դասերի կազմակերպում, սեմինարների,զրույցների իրականացում Կադրային ապահովում Նոր մասնագետի ներգրավում ուսումնական գործընթացում	Ուսուցչի նախատրամադրվածությունը Մասնագետի պակասը Կադրերի պակասը
Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ	Այլ կրթական հաստատության հետ համագործակցություն	Սպորտային, մշակութային միջոցառումների համատեղ կազմակերպում և անցկացում:	Այլ կազմակերպությունների կողմից համագործակցելու պատրաստակամության բացակայություն

Ուսումնական միջավայրը	Նյութատեխնիկական բազայի հարստացում	Ձեռք բերել նոր տեխնիկա,գույք	Անբավարար միջոցները
	<<Մեղվապահությունը դպրոցում>> խմբակի ստեղծում	Համապատասխան գիտելիքներ ունեցող ուսուցչի ներգրավում գործընթացում	Ուսուցչի կողմից նախաձեռնողականության ունը խմբակի ծրագրի հաստատման ուղղությամբ
	Սպորտային թիմերին ֆինանսական փոխհատուցումներ տրամադրել	Դպրոցի բյուջեից, հնարավորության դեպքում, հատկացնել միջոցներ սպորտային մրցումներին աջակցելու համար	Ֆինանսական միջոցների սղություն
	Տարիանման ,ԱՌՆ,ՔՊ պլանների գործնականում կիրառելիություն	Հրահանգավորումների, դասընթացների, վարժանքների պարբերաբար անցկացում:	Համայնքի և ծնողների պասիվ մասնակցություն
	Հաշմանդամ երեխաների վկայագրումև մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրում	Երեխայի առաջին դասարանում տառաճանաչության ունը և վկայագրման ենթակա լինելը	Ծնողի և ուսուցչի աշխատանքների արդյունքը և տրամադրվածությունը
Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	Սովորողների կրթական արդյունքների բարելավում, կյանքի համար անհրաժեշտ կարողությունների զարգացում	Տեսական գիտելիքների և գործնական կարողությունների հաղորդում	Մեթոդների ոչ ճիշտ ընտրություն և պլանավորումների թերություն

6. Նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունների կատարողները ժամանակացույցը և հնարավոր ֆինանսական ծախսերը

Ապաստարանի բարեկարգում	Տնօրեն, Ուս.գծով տեղակալ, խորհրդակցական մարմիններ	2023-2024 թթ	Ծախս չի պահանջում
5-12- րդ դասարաններում սննդի կազմակերպում	Տնօրեն ԾԽ	2023-2025 թթ	Ըստ շահառուների թվի
Ներդպրոցական վերահսկողական պլանի ստեղծում և կիրառում	Տնօրեն, Ուս.գծով տեղակալ, Մ/մ նախագահներ	Յուրաքանչյուր ուստարվա համար	չի պահանջվում
Նախակրթարանի լիցենզավորում	Տնօրեն, օպերատոր Վարչատնտեսական համակարգող	2023-2024 թթ	չի պահանջվում

Խմբակա ների ստեղծում	Տնօրեն Ուսուցիչներ	2023-2025 թթ	Ըստ ժամաքանակի
Սպորտային թիմերի ֆինանսական աջակցություն	Վարչատնտեսական համակարգող	2023-2028 թթ	Ըստ մրցումներ թվի
Տարիանման վարժանքներ, դասընթացներ, սեմինարներ	Տնօրեն Զինղեկ ԴԱԿ, դասղեկներ, մեթոդմի ավորումներ	Յուրանքանչյուր ուսումնական տարվա ընթացքում	չի պահանջվում
Հաշմանդամ երեխաներ վկայագրում	Տնօրեն,Ուս.գծով տեղակալ, առարկայական ուսուցիչներ, ուս.օգնական	2023-2024 թթ	չի պահանջվում
Կրթական արդյունքների բարելավում	Տնօրեն Ուս.գծով տեղակալ մեթոդմի ավորումներ	Յուրանքանչյուր ուսումնական տարվա ընթացքում	չի պահանջվում

Կազմակերպել բաց դռների օրեր ծնողների համար	Տնօրեն, ուս.գծով տեղակալ, մեթոդմիա վորումներ ԴԱԿ	Յուրանքանչյուր ուսումնական տարվա ընթացքում	չի պահանջվում
ԾԽ ընդգրկել ԿԱՊԿՈՒ աշակերտների ուսումնական գործընթացում	Տնօրեն, ԴԱԿ դասղեկներ	2022-2027թթ	չի պահանջվում
Մասնագիտական կողմնորոշման իրազեկման սեմինարներ	Դասղեկներ ԴԱԿ	Յուրանքանչյուր ուսումնական տարվա ընթացքում	չի պահանջվում
Վարպետության դասեր փորձառու մանկավարժների կողմից	Տնօրեն Ուս.գծով տեղակալ, մեթոդմիավորումներ	Յուրանքանչյուր ուսումնական տարվա ընթացքում	չի պահանջվում
Օտար լեզուների դրվածքի բարելավում	Տնօրեն	2023-2024 թթ	Ըստ ժամաքանակի
Դասղեկի ինստիտուտի փոխարինում սոցիալական մանկավարժի ծառայությամբ	Տնօրեն	2023-2028 թթ	Ըստ դասարանների թվի
Համագործակցություն այլ կրթական հաստատությունների հետ	Տնօրեն Ուս.գծով տեղակալ, Մեթոդմիավորումներ դասղեկներ	Յուրանքանչյուր ուսումնական տարվա ընթացքում	չի պահանջվում

8. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հրապուրիչ և որակյալ կրթական միջավայր

Վերանորոգված և նյութատեխնիկական բազայով հագեցած առաջադեմ դպրոց

Փորձառու և մեթոդապես զինված մասնագետներ, նորարար և ստեղծագործ ուսուցիչներ

Սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոց

Ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան ԱԽ և ԾԽ գործունեություն

ՏՀՏ միջոցների լիարժեք ներդնում և կիրառում դասապրոցեսում

Աշակերտ թվի ավելացում

ԲՈՒՀ-եր ընդունվող աշակերտների բարձր ցուցանիշ

Սովորողների մասնակցություն առարկայական օլիմպիադաներում

Սովորողների նախասիրություններին համապատասխան կրթական միջավայր

Ապագա մասնագիտության ճիշտ կողմնորոշում և ընտրություն

21-րդ դարի կարողունակ և մրցունակ քաղաքացի

9. Ծրագրի գնահատման չափանիշները եվ վերահսկողությունը

Ծրագրի իրագործման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է դպրոցի կառավարման խորհուրդը (ԿԽ):

Դպրոցի առաքելությունը և Զարգացման ծրագիրը ենթակա են փոփոխությունների՝ ժամանակակից կրթական պահանջների դինամիկ փոփոխություններին համահունչ, ներքին կամ արտաքին գործոնների օբյեկտիվ ազդեցությունների դեպքում, ինչպես նաև ժամկետից շուտ որոշ աշխատանքներ իրականացվելուց հետո, ֆորս մաժորային իրավիճակներում:

Ծրագրի կատարողականի վերաբերյալ տեղեկատվությունն ամեն տարի 2 անգամ ներկայացվում է կառավարման և խորհրդակցական մարմիններին և հրապարակվում դպրոցի կայքէջում:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Ծրագրի կատարողականի ներկայացում ուսումնական հաստատության խորհրդին	Տարեկան առնվազն երկու անգամ
Հաշվետվության ներկայացում մանկավարժական խորհրդին	Յուրաքանչյուր ուսումնական տարում մեկ անգամ
Հաշվետվության ներկայացում ծնողական ընդհանուր ժողովում	Յուրաքանչյուր ուսումնական տարում մեկ անգամ

10. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

2023-2028 թվականների դպրոցի զարգացման ծրագրում տեղ գտած բոլոր դրույթներն իրատեսական են, իրագործելի, վերջնարդյունքները՝ չափելի: Այն ապահովելու է 2018-2023 թվականներին կատարված աշխատանքների տրամաբանական շարունակությունը: Նախատեսված աշխատանքների համար կան արդեն ձևավորված նախադրյալներ: